ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Անհրաժեշտությունը - «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ընդունումը պայմանավորված է Կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1886-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությամբ գյուղատնտեսության ոլորտում որդեգրված պետական քաղաքականության հիմնական առաջնահերթությունների, մասնավորապես՝ հողերի խոշորացման գործընթացի և իրականացվող հարկային քաղաքականության բարելավմամբ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման ապահովման անհրաժեշտությամբ:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները – Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 126-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընդգրկված հարկային տարիների համար շահութահարկի վճարումից ազատվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված շահութահարկ վճարողները՝ իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամտի, ինչպես նաև այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների մասով, եթե այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների տեսակարար կշիռը համապատասխան հարկային տարվա համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը: Այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների տեսակարար կշիռը համապատասխան հարկային տարվա համախառն եկամտի մեջ տասը տոկոսը գերազանցելու դեպքում սույն մասով նախատեսված արտոնությունը գործում է միայն գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամտի մասով:

Գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվող շահութահարկ վճարողների համար մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը շահութահարկի վճարումից ազատելու մասին պահանջը սահմանվել է հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև նշված ժամկետը գյուղատնտեսության ոլորտում պետք է ներդրված լինեին արտադրանքի համատարած հաշվառման և եկամուտների հայտարարագրման մեխանիզմներ, մինչդեռ դրանք դեռևս ներդրված չեն: Նշված ժամկետը չերկարացնելու դեպքում գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավորողները շահութահարկի վճարումից խուսափելու նպատակով կարող են դադարեցնել իրենց իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակը և գործունեությունը շարունակել ֆիզիկական անձի կարգավիճակով: Մյուս կողմից վերջին տարիներին Կառավարության կողմից գյուղատնտեսության ոլորտում իրականացվող քաղաքականության և աջակցության ծրագրերի շնորհիվ նկատելի են տնտեսությունների խոշորացման և արդյունավետ գյուղատնտեսություն վարող տնտեսությունների ձևավորման միտումները և եթե այդ գործընթացը կասեցվի կամ դանդաղեցվի, ապա դրանից ակնկալվող վնասը կարող է ավելի մեծ լինել, քան շահութահարկի վճարումից ակնկալվող օգուտները:

3. Կարգավորման նպատակը և բնույթը – Նախագծով առաջարկվում է Օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություն, ըստ որի գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվող տնտեսավարողները մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը կազատվեն շահութահարկի վճարումից:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք – Նախագիծը մշակվել է Էկոնոմիկայի նախարարության կողմից: Նախագծի մշակմանն այլ ինստիտուտներ և անձինք չեն մասնակցել:

5. Ակնկալվող արդյունքը – Նախագծի ընդունման արդյունքում հնարավորություն կտրվի բարելավելու գյուղատնտեսության ոլորտում որդեգրված պետական քաղաքականության հիմնական առաջնահերթությունների, մասնավորապես՝ հողերի

խոշորացման գործընթացը և իրականացվող հարկային քաղաքականությունը, որը նպաստի գյուղատնտեսության մրցունակության բարձրացմանը:

6. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026 թվականների ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ - Սույն որոշման նախագիծը բխում է Կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1886-Լ որոշումով հաստատված Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության 23-րդ կետի 11-րդ ենթակետից և 26.1-ին կետի 1-ին ենթակետի դ. պարբերությունից (հղում՝ https://www.arlis.am/Annexes/7/Lokal_2019N1886hav.1.docx, 27-րդ և 45-րդ էջեր), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության կատարմանն ուղղված 2023-2026 թթ. միջոցառումների ծրագրի՝ «1.11 Գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային և արդյունավետ օգտագործման մեխանիզմների ներդրում» միջոցառումից (հղում՝ https://www.arlis.am/Annexes/7/2023_N1222hav_inc1886.docx , 4-րդ էջ):